

ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 19 Մայիսի, 2008

Կիրակի, Մայիսի 18-ին, Լոս Անջելոսին մերձակայ Իւնիվեսալ սիտի քաղաքամասի Զիլթըն հիւրանոցի շքեղ հանդիսասրահում տեղի ունեցաւ Լոս Անջելոսի USC համալսարանի Զայկական ուսումնասիրութիւնների հաստատութեան երրորդ ամենամեայ ճաշկերոյթ-հաւաքը շուրջ 700 հիւրերի մասնակցութեամբ, որոնց թւում էին 33 դեսպան թաթուլ Մարգարեանը եւ ամերիկահայ հանրայայտ ձեռնարկատէր ու բարերար Քըրք Գըրգորեանը: Միջոցառմանը յատուկ գնահատանքի ու մեծարման են արժանացան հինգ կալիֆորնիահայեր՝ նախկին նահանգապետ Ջորջ Դուքմէջեանը, պաշտպանութեան նախարարի նախկին օգնական Փոլ Իզնէյշըսը, դերասան Մայք Օ'Քանըլը, ձեռնարկատէր Ռանըլդ Թուֆորը եւ Բասկէտբոլի նախկին մարզավար Ջերի Թարխանեանը: Մեծարանքի արժանացան նաեւ Լինսի հիմնարկը եւ Միացեալ հայկական հիմնադրամը՝ իրենց մատուցած համահայկական ծառայութեան համար: Նշուել է նաեւ Լոս Անջելոսում անգլերէն հրատարակուող «Կալիֆորնիա Կուրիէր» շաբաթաթերթի հիմնադրման յիսնամեակը: Միջոցառման ընթացքում պատասխանելով իրեն ուղղուած մի հարցի, Քըրք Գըրգորեանն ասել է, թէ. «Ես ցանկանում եմ տեսնել աւելի երջանիկ, աւելի ազատ ու աւելի բարգաւաճ Զայաստան: Ես ամենայն բարին եմ ցանկանում Զայաստանի համար»:



Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի անդամ, կոնգրեսական Ադամ Շիֆը Զինգզաբթի, Մայիսի 15-ին մի օրինագիծ է ներկայացրել, որը Միացեալ Նահանգների նախագահին եւ արտաքին գործերի նախարարին կոչ է անում յորդորել եւ հարկադրել Թուրքիային, որ վերջ դնի Զայաստանի դէմ հաստատած իր 15-ամեայ տնտեսական շրջափակմանը: Օրինագիծը նաեւ եզրագծում է որոշակի քայլեր, որոնք այդ ուղղութեամբ պէտք է ձեռնարկուեն ամերիկեան վարչակազմի կողմից: «Զայաստանի դէմ Թուրքիայի շրջափակման վերացման մասին» խորագրով այդ օրինագիծում շեշտուում է, որ «Զայաստանի դէմ Թուրքիայի կողմից շարունակուող շրջափակումը չի նպաստում տարածաշրջանի անվտանգութեանն ու բարօրութեանը, ինչի հետեւանքով վնաս է հասցւում Միացեալ Նահանգների կարծաժամկետ եւ երկարաժամկետ քաղաքական նպատակներին»:

Վկայակոչելով Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութեան տուեալները, օրինագիծը նշում է, որ Թուրքիայի հաստատած շրջափակումը պատճառ է դարձել Զայաստանի փոխադրագների 30-ից մինչեւ 35 տոկոսի բարձրացմանը, ինչի հետեւանքով ծանր կացութեան է մատնուել Զայաստանի առելուրն ու տնտեսութիւնը: Օրինագիծը Թուրքիայի շրջափակման վերացումից բացի, յանձնարարում է, որ Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութիւնը ներկայացնի Կոնգրեսին մի զեկոյց, որը պէտք է ուրուագծի այն քայլերն ու ծրագրերը, որոնք օրինագծի ընդունումից 30 օրուայ ընթացքում պէտք է կիրառուեն Միացեալ Նահանգների կողմից Զայաստանի դէմ Թուրքիայի հաստատած տնտեսական շրջափակմանը վերջ դրուելու համար: «Մենք պէտք է սաստկացնենք Թուրքիայի վրայ ճնշումը, որպէսզի այն վերացնի Զայաստանի դէմ հաստատած դաժան շրջափակումը եւ թոյլ տայ, որ Զայաստանի գործարարական ոլորտը կարողանայ լիարժէքօրէն մասնակցել համաշխարհային տնտեսութեանը եւ այդպիսով նպաստի Եւրոպային Զայաստանի միաւորմանը», - օրինագծի ներկայացման առիթով յայտարարել է կոնգրեսական Ադամ Շիֆը, որը Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների պալատում ներկայացնում է Գլենդէլ, Բըրբանք, Զարաւային Փասադէնա, հայաշատ քաղաքներն ու յարակից շրջանները:



Զակառակ ադրբեջանական պետական շրջանակների սպառնալիքների ու միջամտութիւնների, Լոս Անջելոսի «Վիլչէր Իբէլ» շքեղ հանդիսասրահում տեղի ունեցաւ Արցախի ազատամարտի 20-ամեակի տօնակատարութիւնը բազմահարիւր հայերի մասնակցութեամբ: Զանդիսութեանը մասնաւորաբար ներկայ էին Զայաստանից հրաւիրուած 33 Ազգային ժողովի Պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ, 33 Պաշտպանութեան նախկին փոխնախարար, Գեներալ-Լէյտենանտ Արթուր Աղաբէկեանը, Զիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Մուշէղ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, 337 Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իզմիրլեանը, Կ.Կ.ի անդամները, Լոս

Անջելոսուն ՀՀ գլխավոր հիւպատոսի տեղակալ Մեսրոպ Շաբոյեանը, ազգային, հասարակական, մշակութային մարմինների, կազմակերպությունների եւ մամուլի ու հեռուստատեսութեան ներկայացուցիչները: Արցախի եւ Հայաստանի հիմներգերի յոտընկայս ունկնդրումից յետոյ, ներկաները մէկ րոպէ յոտընկայս լռութեամբ յարգեցին արցախեան հերոսամարտի զոհուած ազատամարտիկների անմոռաց յիշատակը: Միջոցառմանը հայկական յեղափոխական, հայրենասիրական երգերով ու շրջաբերով հանդէս եկան տեղիս հայ երգիչներն ու արւեստագէտները: Միջոցառման հանդիսավարն էր Արեւմտեան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Կրթական հարցերով պատասխանատու՝ Սարո Հարունը, որը ներկայացրեց օրուայ գլխավոր հիւր բանախօս զօրավար Արթուր Աղաբէկեանին: Հաղործի պաշտպանական շրջանի առաջին հրամանատար Արթուր Աղաբէկեանը նախ խոր յուզումով խօսեց իր զինակից ընկերների հետ անցնող երկու օրերին Լոս Անջելոսուն ունեցած հանդիպումների մասին եւ ապա հանգամանօրէն անդրադարձաւ Արցախի ազգային ազատագրական պայքարի հոլովոյթին, նշելով, որ Արցախի հերոսամարտով կերտուած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը Հայ Դատի իրագործման համահայկական արշաւի անբաժան մասն է կազմում: Հանդիսութեան ընթացքուն ցուցադրուեց նաեւ տեսաժապաւէտներ՝ Արցախի հերոսամարտից:



ՀՀ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի Հանրային կապի յանձնախմբի կազմակերպութեամբ, Մայիսի 7-ի երեկոյեան ժամը 7:30-ին Գլենդէլի Սբ. Աստուածածին եկեղեցոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահուն տեղի ունեցաւ հրապարակային հանդիպում-գրոյց՝ Հայաստանի պաշտպանութեան ներկայիս իրավիճակի եւ զինուորական ծառայութեանն առնչուող օրէնսդրութեան վերաբերեալ: ՀՀ Ազգային ժողովի Պաշտպանութեան, ազգային անվտանգութեան եւ ներքին գործերի մշտական յանձնաժողովի նախագահ, գեներալ-լէյտենանտ Արթուր Աղաբէկեանի Լոս Անջելոս կատարած կարճատեւ այցի շրջանակներուն կազմակերպուած սոյն միջոցառման հիմնական նպատակն էր աւելի լայն հնարաւորութիւն ընձեռել լոսանջելոսահայ համայնքի անդամներին՝ հանդպելու եւ սրտբաց գրոյց ունենալու զօրավար Աղաբէկեանի հետ: Միջոցառմանը ներկայ էին լոսանջելոսահայ մամուլի, լրատուամիջոցների եւ հեռուստակայանների ներկայացուցիչները եւ համայնքի հարիւրաւոր անդամներ: Հանդիպման բացումը կատարեց Հանրային կապի գրասենեակի գործավար՝ Սարո Նազարեանը, որը ողջունելով եւ բարի գալուստ մաղթելով զօրավար Աղաբէկեանին, հակիրճօրէն անդրադարձաւ նրա կենսագրութեանն ու արցախեան ազգային-ազատագրական պայքարին զօրավարի բերած ուշագրաւ ծառայութեանը: Այնուհետեւ նա բեմ հրաւիրեց զօրավար Արթուր Աղաբէկեանին, ինչպէս նաեւ ՀՀ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի հանրային կապի հարցերով պատասխանատու ժան Գոսազեանին՝ վարելու հրապարակային սոյն հանդիպումը: Ջրոյցի սկզբուն պատասխանելով Հայաստանի պաշտպանական ներկայիս ներուժի վերաբերեալ ժան Գոսազեանի հարցին, զօրավար Աղաբէկեանը հանգամանօրէն անդրադարձաւ հայրենիքի պաշտպանութեան հարցով ՀՀ զինուած ուժերի հզօր վճռականութեանը, ընդգծելով, որ հայկական բանակը լիարժեքօրէն պատրաստ է դիմակայելու եւ համապատասխան հակահարուած հասցնելու թշնամական եւ մասնաւորաբար աղբբեջանական ցանկացած ոտնձգութեանը: Նա նաեւ լայն տեղեկութիւններ հաղորդեց բանակաշինութեան ուղղութեամբ շարունակուող նախաձեռնութիւնների եւ զինուորական ծառայութեան բարեկարգման ու զօրեղացման նպատակով ձեռնարկուող օրէնսդրական աշխատանքների վերաբերեալ: Այնուհետեւ առիթ տրուեց ներկաներին՝ իրենց հետաքրքրող հարցերը ուղղելու օրուայ հիւր-բանախօսին: Եղան հայրենիքին, արցախեան ազատամարտին եւ պաշտպանական ջանքերին զօրավիզ կանգնելու վերաբերեալ բազմաթիւ արտայայտութիւններ, տրուեցին բազմաբնոյթ հարցեր՝ Հայաստանի ու Արցախի հզօրացման եւ այդ ուղղութեամբ սփիւռքի դերակատարութեան, ինչպէս նաեւ երթաղաքացիութեան եւ զօրավար Աղաբէկեանի նախաձեռնած «Մարտիկ» հիմանդրամի մասին, որոնց հանգամանօրէն պատասխանեց Արթուր Աղաբէկեանը: Հանդիպումը փակուած յայտարարուեց երեկոյեան ժամը 9:45-ին, սակայն ոգեւորուած ներկաները դահլիճուն համախմբուել էին զօրավարի շուրջը եւ երկար ժամանակ շարունակուն էին իրեց սրտագին գրոյցը նրա հետ:



Միացեալ Նահանգների նախագահական թեկնածու Բարակ Օբամային զօրակցելու նպատակով Գլենդէլուն կեանքի է կոչուել «Հայերը Օբամայի համար կազմակերպութիւնը»,

որը աշխատանքներ է տանում Կալիֆորնիայի նահանգում հայ քուէարկուների ձայները յօգուտ Օբամայի ապահովելու համար: Սոյն կազմակերպութիւնը իր գործունէութիւնը սկսեց ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի Զայ Դատի կողմից Օբամայի թեկնածութիւնը վաւերացուելուց յետոյ: Անդրադառնալով առաջիկայ ծրագրերին, կազմակերպութեան նախագահ Նորա Յովսէփեանը Ուրբաթ, Մայիս 16-ին ունեցած ելոյթում յայտարարեց, թէ Նոյեմբերին կայանալիք Միացեալ Նահանգների նախագահական ընտրութիւնների առիթով նոր քարոզարշաւ է սկսելու՝ Բարաք Օբամայի յաղթանակը ապահովելու համար: Նա նաեւ շեշտեց, որ «Զայերը Օբամայի համար կազմակերպութիւնը» հաւատացած է, որ հայկական եւ ամերիկեան հարցերի վերաբերեալ Օբամայի կեցուածքները արդար են եւ նպաստաւոր՝ հայութեան համար:

Այս լուրերը տրամադրուած են
ԶՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Չանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: